Հաստատված է՝
Տնօրինության 31.03.2026թ.-ի
Թիվ 12-27 արձանագրությամբ
Ուժի մեջ է մտնում 06.04.2026թ.-ից

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿ՝ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ		
Վարկի նպատակ	ՀՀ տարածքից դուրս՝ եկամուտ ստանալու նպատակով, անշարժ գույքի ձեռքբերում[1]	
Ռեզիդենտություն	Ռեզիդենտ ֆիզիկական անձ	
Վարկառու/համավարկառու/երաշխավոր	18 - 65 տարեկան ֆիզիկական անձ	
Եկամուտների առկայություն	Եկամուտների հիմնավորմամբ	Առանց եկամուտների հիմնավորման
Վարկի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	
Վարկի ժամկետ	36 - 240 ամիս	
Վարկի գումար	**ՀՀ դրամ**	
	16 000 000 – 150 000 000	
	ԱՄՆ դոլար	
	50 000 – 350 000	
Տարեկան անվանական տոկոսադրույք (Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույք) տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից	**ՀՀ դրամ**	
	13.5%	15%
	ԱՄՆ դոլար	
	10.5%	12%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	**ՀՀ դրամ**	
	14.37 – 17.69%	16.08 – 18.24%
	ԱՄՆ դոլար	
	10.47 - 12.27%	12.68 - 14.54%
Ապահովման միջոց	Վարկառուին և/կամ նրա ընտանիքի անդամին պատկանող ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույք	
Վարկ/գրավ հարաբերակցություն (հաշվարկվում է գրավադրման արժեքի վրա[2])	Երևանում գտնվող գույքի համար՝ 100% Երևանից դուրս գտնվող գույքի համար՝ 85%	70%

[1] Ձեռքբերվող անշարժ գույքը չի կարող դառնալ հիմնական բնակության վայր:

TC 03-18#1

Հաստատված է՝
Տնօրինության 31.03.2026թ.-ի
Թիվ 12-27 արձանագրությամբ
Ուժի մեջ է մտնում 06.04.2026թ.-ից

Եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (ԸՊԵ կամ OTI)	≤ 60%	Կիրառելի չէ
Մարման եղանակ	Անուիտետային *(մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում)* Դիֆերենցված *(մայր գումարի ամենամսյա հավասարաչափ վճարում)*	
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ	
Վարկի տրամադրման միջնորդավճար	Առկա չէ	
Վարկի սպասարկման ամսական վճար	Առկա չէ	
Վարկի վաղաժամկետ մարման տույժ	վաղաժամկետ մարվող գումարի 5%	
Ժամկետանց մայր գումարի տույժ	0.1% օրական	
Ժամկետանց տոկոսագումարի տույժ	0.13% օրական	
Գրավի գնահատում	Գրավադրվող գույքը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողներից որևէ մեկի կողմից:	
Ապահովագրություն	Առկա չէ	
Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն վճարում է նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց	1) սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ, 2) իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ, 3) նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ, 4) գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ: Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:	
Երաշխավորություն	Ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի կողմից (կարող է պահանջվել վարկը հաստատող լիազոր մարմնի որոշմամբ)	
Վարկառուի/համավարկառուի/գրավատուի նկատմամբ վարկային պատմության պահանջները	Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ անձանց պարտավորությունների դիմաց	

[2] *Գրավադրման արժեքը որոշվում է անկախ գնահատողի կողմից հաշվարկած շուկայական արժեքի հիման վրա, որը կարող է ճշգրտվել Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:*

Հաստատված է՝
Տնօրինության 31.03.2026թ.-ի
Թիվ 12-27 արձանագրությամբ
Ուժի մեջ է մտնում 06.04.2026թ.-ից

	տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով, Վարկառուի/համավարկառուի վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:

Ծանոթություն

Նախքան պայմանագրի կնքումը Բանկը վարկառուին, համավարկառուին և երաշխավորին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են վարկի էական պայմանները:

Հաճախորդին տրամադրվում է պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ և յոթ օր մտածելու ժամանակ:

1) Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 1/365 հարաբերակցությամբ իսկ նահանջ տարվա համար՝ 1/366 հարաբերակցությամբ օրվա հաշվարկից:

2) **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅՍ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:** Տոկոսադրույքը կարող է վերանայվել տարեկան ոչ ավելի, քան երկու անգամ: Տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է 3.5 տոկոսային կետ, որը հաշվարկվում է տրամադրված վարկի սկզբնական տոկոսադրույքի նկատմամբ:

3) Գրավի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման:

4) Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողների ցանկը և Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը նշված է Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am:

5) **Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում:**

6) Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման գործոններն են՝ Վարկային հայտի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

7) Վարկի մերժման գործոններն են՝ Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

8) Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում՝ **3 աշխատանքային օրվա ընթացքում** և տրամադրում՝ **մինչև 7 աշխատանքային օր:**

9) Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար, որպես կանոն, Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

10) Հաճախորդը իրավունք ունի կատարել կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարտավորության ամբողջական կամ մասնակի ժամկետից շուտ մարում՝ համաձայն սույն փաստաթղթով սահմանված պայմանների: Վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկավորման ընդհանուր ծախսը՝ վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև տրամադրման և սպասարկման վճարները կամ նվազեցվում է վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:

10.1. Երաշխավորն իրավունք ունի ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:

10.2. Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Հաստատված է՝
Տնօրինության 31.03.2026թ.-ի
Թիվ 12-27 արձանագրությամբ
Ուժի մեջ է մտնում 06.04.2026թ.-ից

10.3. Բանկից ստանալ քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները՝ համաձայն Բանկում գործող Ոչ ֆինանսական ծառայությունների սակագների:

11) Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

12) ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՉԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ և ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎԵՐՋԻՆՍ ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:

13) ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ www.fastbank.am:

14) ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԵԴԻՏԱՌՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԶՐԿՎԵԼ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ, ԵԹԵ ՉԿԱՏԱՐԻ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

15) ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

16) ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

17) ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ Յ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԱՔՌԱ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ և ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

18) ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ, ԿԱՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅԼ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

19) ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՕԳՏՎԵԼ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» /www.fininfo.am/ ՀԱՐԹԱԿԻՑ: ԱՅՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

20)ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանություն.

Ճշգրտվող տոկոսադրույքը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից (տարրերից).

Հաստատված է՝
Տնօրինության 31.03.2026թ.-ի
Թիվ 12-27 արձանագրությամբ
Ուժի մեջ է մտնում 06.04.2026թ.-ից

1) բազային տոկոսադրույք,
2) հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ:

Ճշգրտվող տոկոսադրույքը Պայմանագրով սահմանված կարգով հաշվարկված անվանական տոկոսադրույք է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ ՃՏ= ՄԲ+ՄՀ,
որտեղ՝

ՄՃ – Ճշգրտվող տոկոսադրույք,
ՄԲ – Բազային տոկոսադրույք,
ՄՀ – Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ, որտեղ՝ **Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչը հավասար է՝**

ՀՀ դրամի դեպքում՝ 5.0%,
ԱՄՆ դոլարի դեպքում՝ 8.0%,
Եվրոյի դեպքում՝ 7.0%:

ՀՀ դրամով վարկերի ճշգրտվող տոկոսադրույքի բազային տոկոսադրույքի համար հիմնական տոկոսադրույք է համարվում ՀՀ բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից 1 տարուց մինչ 5 տարի ժամկետայնությամբ ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը՝ հաշվարկված որպես վերանայման օրվա դրությամբ հասանելի նախորդ ամսվա դիտարկումների՝ կլորացված ստորակետից հետո 1 տասնորդական նիշի ճշտությամբ:

Բանկային համակարգի կողմից ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից ներգրավված ավանդների տոկոսադրույքներին կարող եք ծանոթանալ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx կայքի՝ Ֆինանսական շուկայի տոկոսադրույքներ» բաժնի՝ «Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները» հրապարակման մեջ:

Որպես երկրորդային տոկոսադրույք է համարվում ՀՀ բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով ներգրված 1 տարուց ավել ժամկետայնությամբ ժամկետային ավանդների տոկոսադրույքը հաշվարկված որպես վերանայման օրվա դրությամբ հասանելի նախորդ ամսվա դիտարկումների՝ կլորացված ստորակետից հետո 1 տասնորդական նիշի ճշտությամբ:

ԱՄՆ դոլարով վարկերի ճշգրտվող տոկոսադրույքի բազային տոկոսադրույքի համար հիմնական տոկոսադրույք է համարվում՝ 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (CME Term SOFR USD 6 Month) Տոկոսադրույքին կարող եք ծանոթանալ՝ https://www.newyorkfed.org/markets/reference-rates/sofr կայքէջում:

Որպես երկրորդային տոկոսադրույք է համարվում՝ 6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության կորի եկամտաբերությունը, որի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ https://www.federalreserve.gov/releases/h15/ կայքէջում:)

Եվրոյով վարկերի ճշգրտվող տոկոսադրույքի բազային տոկոսադրույքի համար հիմնական տոկոսադրույք է համարվում՝ Եվրոյի կարճաժամկետ տոկոսադրույք (€STR), որը հրապարակվում է Եվրոպական Կենտրոնական Բանկի կողմից https://www.ecb.europa.eu/stats/financial_markets_and_interest_rates/euro_short-term_rate/html/index.en.html կայքէջում:

Որպես երկրորդային տոկոսադրույք է համարվում՝ 12-ամսվա համար առաջարկվող ԵՎՐՈԻԲՈՐ (EURIBOR), որը հրապարակվում է Եվրոպական դրամական շուկաների ինստիտուտի (European Money Markets Institute (EMMI)) կողմից https://www.emmi-benchmarks.eu/euribor-org/euribor-rates.html կայքէջում:

Ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայում կարող է տեղի ունենալ Պայմանագրի կնքումից **երեք տարի հետո**՝ առաջիկա փետրվար կամ օգոստոս ամիսների քսաներորդ օրը: Նշված ժամկետից հետո

Հաստատված է՝
Տնօրինության 31.03.2026թ.-ի
Թիվ 12-27 արձանագրությամբ
Ուժի մեջ է մտնում 06.04.2026թ.-ից

պարբերական վերանայումները կարող են իրականացվել յուրաքանչյուր վեց ամիսը մեկ՝ փետրվար և օգոստոս ամիսների քսաներորդ օրը:

Տոկոսադրույքի վերանայման/ճշգրտման դեպքում նոր տոկոսադրույքը կիրառվում է վերանայման/ճշգրտման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 20-ից, սակայն ոչ շուտ, քան Վարկառուին այդ մասին ծանուցելը: Բանկը պարտավորվում է Վարկառուին ծանուցել՝ փոփոխությունը ուժի մեջ մտնելուց առնվազն 1 (մեկ) ամիս առաջ:

Յուրաքանչյուր վերանայման ամսաթվից մինչև հաջորդ վերանայման ամսաթիվը Բազային տոկոսադրույք է համարվում վերանայման տվյալ ամսաթվի դրությամբ գործող Բազային տոկոսադրույքը, և վարկի տոկոսավճարների հաշվեգրումն ու գանձումը կատարվում է վերանայված տոկոսադրույքով:

Բազային տոկոսադրույքը հաշվելիս համապատասխան հաշվարկներն իրականացվում են ճշգրտվող տոկոսադրույքների մաթեմատիկական կլորացման կանոններով՝ տասնորդական տոկոսի ճշգրտությամբ:

Ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է վերանայման, այն դեպքում երբ հաշվարկված տոկոսադրույքի և գործող տոկոսադրույքի տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետից ավելի:

Փոփոխված տոկոսադրույքը կիրառվում է վարկի մնացորդի նկատմամբ ոչ շուտ, քան Վարկառուին այդ մասին Պայմանագրով Կողմերի միջև ծանուցումների/հաղորդակցման համար սահմանված եղանակով տեղեկացնելուց 30 (երեսուն) օրացուցային օր օր հետո:

Տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է 3,5 տոկոսային կետ, որը հաշվարկվում է տրամադրված վարկի սկզբնական տոկոսադրույքի նկատմամբ:

Օրինակ՝ եթե գործող դրամային վարկի տոկոսադրույքը 13.5% է և ենթադրենք վարկի տրամադրումից անցել է 3 տարի և բազային տոկոսադրույքն այդ պահին 8% է: Հաշվարկվող նոր ճշգրտվող տոկոսադրույքը կստացվի 8% + 5% = 13%: